ԿԱՐԾԻՔ

ՀԱՍՄԻԿ ԱԼԲԵՐՏԻ ԿՈՆՋՈՅԱՆԻ «ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ԵՎ ԿՐՏՍԵՐ ԴՊՐՈՑԱԿԱՆ ՏԱՐԻՔԻ ԵՐԵԽԱՆԵՐԻ ԿՐԹԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅՈՒՆԸ ՊԱՅՄԱՆԱՎՈՐՈՂ ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ՄԵԹՈԴՆԵՐԸ» խորագրով ատենախոսության և սեղմագրի մասին, ԺԹ.00.05 - Զարգացման և կրթության հոգեբանություն մասնագիտությամբ, հոգեբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման:

Մասնագիտական խորհրդի հարգելի նախագահ, հարգելի անդամներ:

Սկզբից կցանկանայի վերնագրի հետ կապված մեկ դիտարկում անել, որով կպարզեցվի ատենախոսության մեթոդաբանական էությունը: «Հոգեբանական մեթոդներ» ձևակերպումը վերաբերում է ինտեգրատիվ հոգեբանամանկավարժական մեթոդին, քանի որ դա այն մոտեցում է, որը ներառում է հոգեբանական և մանկավարժական տարբեր ոլորտների գիտելիքները, տեխնիկաները և սկզբունքները, համատեղում է դրանք մեկ ընդհանուր համակարգի մեջ: Փաստորեն այդ մոտեցմամբ վերանում է, այսպես կոչված, մեկ, կոշտ տեսության անհրաժեշտությունը հնարավորություն տալով գործիքների ճկուն համադրություն դրանք համապատասխանեցնելով անձի անհատական բնութագրերին և պահանջմունքներին: Որպես հիմնական սկզբունքներներ դիտարկվում է ամբողջականությունը, ճկունությունը, միջառարկայականությունը: Անձը դիտարկվում է մեկ ամբողջություն, քանի որ կենսաբանական, հոգեբանական, սոցիալական և կրթական ասպեկտները փոխկապակցված են: Մասնագետը չի ստիպում անձին համապատասխանել որևէ ձևանմուշի, այլ ստեղծում է անհատականացված ծրագիր հիմնված նրա ուժեղ կողմերի վրա: Աշխատանքում միջառարկայականությունը երևում է, քանի որ օգտագործվել են դասական հոգեբանության, մանկավարժության, նյարդահոգեբանության և մարմնի վրա կենտրոնացած պրակտիկայի տվյալները:

Հասարական կյանքի ժամանակակից, տարաբնույթ և սրընթաց զարգացումներն անմիջապես իրենց արտացոլումներն են գտնում կրթության համակարգում: Կրթական գործընթացների ակտիվացմանը միտված Հոգեբանա-մանկավարժական ինտեգրատիվ ուսումնասիրությունների զգալի մասը շոշափում են տարիքային այն խնդիրները, որոնք առավելագույնս վերաբերում են ուսումնառողների մոտիվացիային, ուսումնական խնդիրներին, ուսումնական նյութերի պլանավորմանը և մեթոդական համակարգի կատարելագործմանը: Ակնհայտ է որ այսօրվա երեխան կամ դպրոցականը միանգամից տարբերվում են 50-60 ական թվականների իրենց տարեկիցներից: Կրթության համակարգի

ընդհանուր ճգնաժամը մեր օրերում վերաբերում է նաև նախադպրոցական տարիք երեխաներին և կրտսեր դպրոցականներին: Մի կողմից իրական հնարավորությունների և կոգնիտիվ ոլորտի ընդլայնումը, մյուս կողմից՝ կրթական ծրագրերի, ուսումնաօժանդակ նյութերի, դասավանդողների և ուսումնառողների սոցիալական և հուզական բաղադրիչների անհամապատասխանությունը՝ ի հաշիվ տեղեկատվական հենքի խոշորացման, սոցիալ հոգեբանական տարբեր կողմերի համաժամանակյա ազդեցություններով հարուցում են ուսումնական բնույթի էական դժվարություններ, կրթության շարունակակության ապահովման ներկայիս փուլում, հատկապես նախադպրոցական տարիքից կրտսեր դպրոցական տարիքին անցնելու շրջանում: Ահա թե ինչու են կարևորվում ուսուցման մեթոդների և տեխնոլոգիաների ուղղությամբ կատարվող տարաբնույթ հետազոտությունները: Սակայն կրթական համակարգի արդիականացմանը միտված մեթոդական աշխատանքի հոգեբանական վերլուծությունները ինչքան էր խորքային իմաստով վիճահարույց լինեն, արդյունքում մշտապես հանգեցնելու են կրթության որակի բարելավմանը: Այս տեսանկյունից կարելի է սույն հետազոտությունը արդիական համարել:

Ատենախոսության ներածական մասը շարադրված է գրագետ լեզվով, բոլոր բաղադրիչները (օբյեկտ, առարկա, նորույթ և այլն) համակարգված են և ամբողջական: Հետազոտության համար մեթոդաբանական հիմք են ծառայել Ֆրիդրիխ Ֆրյոբելի, Ռոբերտ Ռուենի, Մարիա Մոնտեսորիի, Ռեջիո Էմիլիայի, Ռ. Շտայների (Վալդորֆյան մոտեցում), ինչպես նաև զարգացման բիհեվյորիստական (Ուոթսոնը, Բ. Ֆ. Սքինները, Է. Թորնդայկը, Ի. Պ. Պավլովը), կոգնիտիվիստական (Հ. Էբբինգհաուսը, Ռ. Աթկինսոնը, Ժան Պիաժեի) և կոնստրուկտիվիստական (Լ. Վիգոտսկին, Լ. Վ. Զանկովը, Դ. Բ. Էլկոնինը, Վ.Վ.Դավիդովը) մոտեցումները, ուսուցման կազմակերպման հիմանական սկզբունքներն ու տեսությունները: Ինչպես երևում է մեթոդաբանությունը կառուցված է ուսուցման կոգնիտիվ, վարքային, զարգացնող ուսուցման հայեցակարգերի վրա, որոնք իրենց արտացոլումն են գտել հետազոտության տեսական և փորձարարական բաժիններում: Գիտական նորույթը կառուցված է տարիքային և իմացական ոլորտների ընդլայնման շեշտադրմամբ, հատկապես իմացական հնարավորությունների խորացման ուղղությամբ, որոնց ժամանակակին շատ ուշադրության է դարձվել Լ.Ս.Վիգոդսկու, Դ. Էլկոնինի, Լ. Զանկովի և Վ.Վ.Դավիդովի կողմից իրենց փորձարարական դպրցներում կատարած հետազոտությունների շրջանակում: Ատենախոսության կառուցվածքը և բաղադրիչների առանձնացումները համապատասխանում է ընդունված ձևաչափին: Առաջին գլխում վերլուծվում են **Նախադպրոցական և կրտսեր դպրոցական տարիքի երեխաների կրթական գործընթացների արդյունավետ զարգացման ուղղությունները, որպես** Կրթական գործընթացների զարգացման պատմական ակնարկ, Զարգացնող ուսուցման տեսություններ: Անդրադարձ են արվում Նախադպրոցականների և կրտսեր դպրոցականների հոգեբանական

բնութագրերին, տարիքի հոգեբանական խնդրին: Չնայած տարիքը կյանքի սահմանափակ ժամանակաշրջանն է, այդուհանդերձ ներպառում է դեռևս բավարար չափով չուսումնասիրված հնարավորություններ հետագա զարգացումներն ապահովելու համար: Այս գաղափարն իր մեկնաբանություն է ստացել Վիգոտսկու կողմից, երկերի լիակատար ժողովածուի 4 հատորի գլուխներից մեկում (Տարիքի հիմնախնդրի մասին): Երկրորդ գլխում դիտարկվում է **ինտեգրված հոգեբանա-մանկավարժական մեթոդի փորձարական հետազոտության** կազմակերպման ընթացքը, մեթոդիկան և արդյունքների քանակական և որակական բնութագրերը: Աշխարհի տարբեր երկրներում կիրառվող զարգացնող ուսուցման մոդելները ցույց են տալիս արդյունավետության բազմազանության դրսևորումները: Օրինակ՝ Ռեջիո Էմիլիո դպրոցներում դասարաններն հիմնականում բնական հումքից պատրաստված և կահավորված, գեղեցիկ, լուսավոր և երեխաների զարգացման համար խթանող առարկաներով ապահովված սենյակներ են: Սրանք արտաքնապես կարծես թե ֆիզիկական միջավայրի ձևավորման մասին է, բայց խորքային իմաստով դրանք ունեն կոնկրետ հոգեբանական ազդեցություն, քանի որ այդ միջավայրը համադրվում է այլ երևույթների հետ: Բանն այն է, որ դասավանդողները՝ ուսուցիչները, դիտարկում և գրառում են երեխաների քննարկումները, աշխատանքները: Դիտողություններն ու միջոցառումները՝ գրառումների, տեսանյութերի եւ լուսանկարների տեսքով ներկայացվում են ծնողներին: Այսինքն, տեղի է ունենում ֆիզիկական, սոցիալական և կոգնիտիվ միջավայրերի ինտեգրացիա, արդյունքում՝ լիովին տեսանելի է դարձնում ուսումնառությունը և օգնում է ծնողներին պարբերաբար պատկերացնել, թե ինչ են անում իրենց երեխաները դպրոցում՝ մտավոր և ֆիզիկական առումով, ինչ են սովորում իրենց երեխաները; ուսուցիչներն ավելի լավ են ճանաչում երեխաներին, իսկ «Երեխաները տեսնում են, որ իրենց աշխատանքը գնահատված է»:

Մյուս տարածված մոտեցումը՝ Վալդորֆյան մոտեցումն է, որը՝ նույնպես մեծ տարածում է գտել ,ամբողջ աշխարհով: (1919 թվականից, Ռուդոլֆ Շտայների կողմից): Ինչպիսի դիտարկումներ կան այս մոտեցման շրջանակում: 1861 – 1925 թվականներին Ռուդոլֆ Շտայները, ավստրիացի գիտնական, Վալդորֆյան դպրոցի հիմնադիր, փիլիսոփա, ուսումնասիրելով գերմանական դասական գրականությունը՝ մասնավորապես Գյոթեի, Շիլլերի, Լեսսինգի աշխատությունները, ինչպես նաև ծանոթանալով Նիցշեի արխիվային նյութերին փորձել է լուսաբանել մի կողմից ազատության և մյուս կողմից՝ անհատականության և ինքնուրույնության ըմբռնման հիմքերը: Կարելի է հասկանալ, թե ինչու են այսքան շատ ընտրվել հետազոտության մեթոդները: Նկատի ունենք՝ նախադպրոցական և կրտսեր դպրոցական տարիքի երեխաների ճանաչողական գործընթացների, հիշողության (Հիշիր թվերը, Հիշիր պատկերները, Գտիր և ջնջիր), Ուշադրության(Գտիր և ջնջիր, Լանդոլտի օղակները) , ինտելեկտի գնահատման համար՝ Ռավենի «Գունավոր պրոգրեսիվ մատրիցաները» թեստի մանկական տարբերակը, ստեղծագործական ընդունակությունների

/կրեատիվության/ գնահատման համար՝ Տորենսի կրեատիվության թեստը /Վիլիամսի մոդիֆիկացված տարբերակը/, անձնային առանձնահատկությունների ուսումնասիրման համար՝ Ռ. Բ. Կետտելի Բազմագործոն անձնային հարցարանի մանկական տարբերակը, իսկ երեխաների հուզական ոլորտը գնահատելու համար: կիրառել է նաև Ռոզենցվեյգի Ագրեսիվության մակարդակի ախտորոշման և Ռ. Թեմփլի, Մ. Դորկիի, Վ. Ամենի «Ընտրիր համապատասխան դեմքը» մեթոդիկաները: Ինչպես երևում է խոսքը վերաբերում է մտածողության, անձնային որակների, ուշադրության և հիշողության ու կրեատիվ դրսևորումների համաժամանակյա ուսումնասիրությանը, որը գործնական իմաստով ինտեգրատիվ են իրենց ազդեցության հնարավորություններով: Մանկական տարիքի համար հնարավոր է առաջադրել որևէ խնդիր, որը երեխան չի կարողանում լուծել, քանի որ չի տիրապետում լուծման եղանակին: Ի՞նչ է ստացվում արդյունքում: Ոչ թե խնդիրը չի կարողանում լուծել, այլ խնդրի տրման ձևաչափը հնարավորություն չի տալիս, ուստի երեխան չի տիրապետում լուծման եղանակին: Կարելի է արձնագրել, որ տարբեր մեթոդները և մեթոդիկաները լրացնում են միմյանց ոչ միայն տեղեկատվական իմաստով, այլ ընդլայնում են երեխայի կոգնիտիվ պատկեացումները՝ ի հաշիվ ուշադրության և հիշողության ակտիվացման: Ռավենի «Գունավոր պրոգրեսիվ մատրիցաները» թեստի մանկական տարբերակը, ստեղծագործական ընդունակությունների կրեատիվության գնահատման կամ Տորենսի կրեատիվության թեստը (Վիլիամսի մոդիֆիկացված տարբերակը), անձնային առանձնահատկությունների՝ Ռ. Բ. Կետտելի Բազմագործոն անձնային հարցարանի՝ մանկական տարբերակը, երեխաների հուզական ոլորտը գնահատելու համար՝ Ռոզենցվեյգի Ագրեսիվության մակարդակի ախտորոշման և Ռ. Թեմփլի, Մ. Դորկիի, Վ. Ամենի «Ընտրիր համապատասխան դեմքը» մեթոդիկաները համադրվում են որպես անձնային և կոգնիտիվ, հուզական և վարքային այլ որակների հետ, ,որոնցով ավելի տեսանելի են դառնում կոմպլեքսային հետազոտությունը՝ որպես ինտեգրատիվ գործընթացների արդյունք: Հարց է ծագում ինչպես համադրել ավանդական և նոր մեթոդները ուսումնառության գործընթացի ակտիվացման համար: Պետ՞ք են դեն նետել ավանդական մեթոդները, դրանք փոխարինելով նորագույն տեխնոլոգիաներով: Մեթոդների ուսումնասիրման պատմությունը ցույց է տալիս, որ նոր մեթոդների օգտագործման խնդիրը ծագել է այն ժամանակ, երբ բացահայտվել են ավանդական մեթոդների թերությունները, չնայած այդ մեթոդները կիրառման մեծ դաշտ են ունեցել և անցել են երկար փորձաքննությունների ճանապարհ: Հատկապես ուսումնասիրության չեն ենթարկվել այն հիմնախնդիրները, թե ի՞նչպես կարելի է ինտեգրել ավանդական և այլընտրանքային ուսուցման զարգացնող մոդելները՝ հիմնվելով վերջիններիս դրական և արդյունավետ կողմերի վրա: Բայց չէ՞ որ նորագույն մեթոդների կիրառումը ևս ունի իր թերությունները, եթե դիտարկվում են առանձին և զգայաշարժողական ոլորտի զարգացումից դուրս: Թվայնացված ծրագրերի

օգտագործման դեպքում երեխան չի կարողանում մտքով որոշ թվաբանական գործողություններ կատարել, քանի որ չունի սենսոմոտորային զարգացման բավարարար մակադակ: Ահա թե ինչու են հեղինակներն ավելի շատ ընդունելի համարում ավանդականի և նոր մեթոդների խելացի համադրումները: Մի իրողություն, որին անդրադարձել է ատենախոսը: 3-րդ գլխում քննարկվում է ինտեգրված հոգեբանա-մանկավարժական մեթոդը: Տրվում է մեթոդի իրացման ծրագիրը և այնուհետև անցկացվել է ռեթեստավորում: Ինտեգրված հոգեբանա-մանկավարժական մեթոդը դիտարկվում է որպես երեխայի անձի բազամակողմանի զարգացման միջոց: Ամենապարզագույն դիտարկումները ցույց են տալիս, որ երեխաները ցանկանում են ընկերություն անել, սակայն չգիտեն, թե ինչպես կարելի է շփվել միմյանց հետ, իսկ արդյունքում կռվում են ու նեղանում իրարից, քանի որ շփման հմտություններ չունեն և ոչ ոք իրենց դա չի սովորեցնում: Դաստիարակների և ուսուցիչների նկատմամբ վերաբերմունքում գերակշռում է միջինը, նույն մոտեցումն է ինչ ծնողների հանդեպ: Այստեղ էլ մանկավարժները հիմնականում կատարում են ծրագրային իրենց աշխատանքը, իսկ հուզական շփումները թույլ են: Մյուս սանդղակներից էլ տեսնում ենք, որ միտում կա առավել քիչ շփվողականությանը, մեկուսացվածությանը: Հետաքրքիր է Ռ. Թեմփլի, Մ. Դորկիի, Վ. Ամենի «Ընտրիր համապատասխան դեմքը» (Խաղ փոքր երեխայի հետ, Երեխան և մայրը նորածնի հետ, Ագրեսիայի օբյեկտը, Հագնվելը, Խաղ մեծ երեխաների հետ, Մենակ քնելու ուղարկելը, . Լվացվելը, Պատիժ, Անտեսում, Ագրեսիվություն, Խաղալիքներ հավաքելը, Մեկուսացում, Երեխան ծնողների հետ): ինտեգրված մոտեցում նախադպրոցական և կրտսեր դպրոցական տարիքի երեխաների համար ծրագիրը ներառում է ավանդական և ոչ ավանդական մեթոդների ինտեգրում, ինչպիսիք են Մոնտեսորին, Ռեջիո Էմիլիայի և Ռ. Շտայների մեթոդը, ինչպես նաև հիմնավորվել է դրա արդյունավետությունը և ընդգծվել դրա դերը այս տարիքի երեխաների զարգացման գործընթացում:

Նախադպրոցական տարիքի երեխաների համար նախատեսված ծրագրի հատվածում ներկայացված է ինտեգրված հոգեբանա-մանակավարժական մեթոդի կիրառման տարեկան թեմատիկ պլանը, որն ինտեգրում է Մոնտեսորի, Ռեջիո Էմիլիայի, Շտայների և ավանդական մոտեցումները: Մեթոդական հիմքը՝ ՀՀ նախադպրոցական կրթության պետական չափորոշիչներն են, Մոնտեսորի մանկավարժությունը, մասնավորապես ինքնուրույնության զարգացումը՝ ինքնուրույն աշխատանքների միջոցով, զգայարանների հետ աշխատանքը, զարգացումը, որի համար անհրաժեշտ է պատրաստված ֆիզիկական միջավայր, Ռեջիո Էմիլիա մոտեցումը՝ նախագծային ուսուցումը, տարբեր ձևերով ինքնաարտահայտումը (նկարչություն, խոսք, շարժում), դիտարկումներն և փաստագրումը, և Շտայների /Վալդորֆ/ մոտեցումը կապված՝ ռիթմի հետ(շարժունություն), ակտիվ ներգրավվածությունը, արվեստը և պատմությունը, երևակայությունը: Նշված սկզբունքները հիմք ընդունելով մշակվել է թեմատիկ պլան: Ամբողջությամբ թեմատիկ ծրագիրը կառուցված է կոմպլեքսային

ուսումնասիրության տեսանկյունով: Նույնատիպ մշակումներ կան նաև կրտսեր դպրոցականների համար: **Մոնտեսորի** անկախություն և գործնական ուսուցում, **Ռեջիո Էմիլիայի** նախագծերի վրա հիմնված համագործակցային ուսուցում, **Շտայներ** ռիթմ, պատմություններ պատմելը, արվեստի ինտեգրացիա, **Ավանդական** /ուսումնական չափորոշիչներ/: Հիմնական սկզբունք յուրաքանչյուր երեխա սովորում է իր զարգացման տեմպով:

ՈՒսումնական շրջանակ: Հիմնական ուսումնական ոլորտներ Լեզու և գրագիտություն, Մաթեմատիկա, Բնական գիտություններ, Արվեստ և ստեղծագործականություն, Հասարակական ուսումնասիրություններ, Ֆիզիկական դաստիարակություն: Մոտեցումը կարողությունների վրա հիմնված ուսուցում, թեմատիկ ինտեգրացիա, էքսպերիմենտալ ուսուցում:

Գնահատման քաղաքականություն: Գնահատումը հիմնված է հետևյալի վրա՝ ձևավորող գնահատում, ուսումնական պորտֆոլիոներ, նախագծերի վրա հիմնված գնահատում, ուսուցչի դիտարկում, սակայն նշենք, որ սկզբնական դասարաններում թվային գնահատման վրա կենտրոնացում չկա: **Ներառական քաղաքականություն:** Ծրագիրն ապահովում է անհատականացված ուսումնական պլաններ, տարբերակված ուսուցման աջակցություն հատուկ կրթական կարիքների համար, ներառական դասարանային միջավայր: **Դպրոցական միջավայր և ենթակառուցվածքներ:** Դասարանի դիզայնը ներառում է՝ Մոնտեսորիի ուսումնական անկյուններ, Ռեջիո Էմիլիայի արվեստանոց (ստեղծագործական ստուդիա), Շտայների պատմողական անկյուն, ընթերցանության տարածք, հանգստի անկյուն: Միջավայրը պետք է լինի անվտանգ, գեղագիտական, երեխային հարմարեցված, հասանելի: Այս գլխում երևում է տարբեր գիտական հայեցակարգերի համատեղման գործնական ներդրումները, փորձարարարական աշխատանքի արդյունքները, համեմատվել են նաև «Անավարտ նկար» և «Տորրանսի մատրիցաները» մեթոդիկաների արդյունքները փորձարարական և ստուգիչ խմբերում :

Ատենախոսության վերաբերյալ դիտարկելի են հետյալները:

1. Փորձարարական և ստուգիչ խմբերը ձևավորվել են մի քանի հատկանիշով: Բայց չէ՞ որ ստուգիչ խմբում կարող են լինել այնպիսի երեխաներ, ովքեր տիրապետում են նշված մեթոդին, ուրեմն պետք է նշվեր, որ նրանց նախապես ուսումնասիրվել է, որ նրանք ծանոթ չեն քննարկվող մեթոդին:

2. Տեքստի տարբեր մասերում պետք է նշվի մեթոդների և մեթոդիկաների ընտրման՝ հիմնավորումները հետազոտության բնույթից կախված՝ նկատի ունենալով, որ մանկական թեստերն շատ են և պարզ չէ, թե ինչու են ընտրվել հատկապես այդ մեթոդները:

3. Փորձարարական խմբի մասով չի նշվում, թե ուսուցման գործընթացում ինչպիսի դժվարություններ եղան մեթոդների անհատական և խմբային ուսուցման գործընթացում:

4. կան նաև տեխնիկական բնույթի թերություններ:

Սակայն կարծում ենք, որ նշած թերությունների մի մասը ընդհանուր բնույթի են, քանի որ հավասարարժեք խմբերի կազմավորումը լուրջ ոլորտ է և հաճախ չի հիմնավորվում ատենախոսություններում:

Ամփոփելով և ընդհանրացնելով ամբողջ ատենախոսությունը՝ կարող ենք եզրահանգել, որ Հասմիկ Ալբերտի Կոնջոյանի «նախադպրոցական և կրտսեր դպրոցական տարիքի երեխաների կրթական գործընթացների արդյունավետությունը պայմանավորող հոգեբանական մեթոդները» խորագրով թեկնածուական ատենախոսությունն իր տեսափորձարարական բովանդակությամբ, առաջադիր նպատակով, խնդիրներով, գիտական նորույթով, տեսագործնական նշանակությամբ, ստացված տվյալների հավաստիությամբ համապատասխանում է հաստատված թեմայի թվանիշին, հրատարակված հոդվածներում պահպանված է ատենախոսության հիմնական դրույթների ընդգրկման ամբողջականությունը, ավարտուն է և համապատասխանում է ՀՀ ԲԿԳԿ –ի կողմից նախատեսված 7-րդ կետի պահանջներին, այսինքն՝ ԺԹ.00.05- «Զարգացման և կրթության հոգեբանություն» մասնագիտությամբ հոգեբանության բնագավառում կարևոր նշանակություն ունեցող խնդրի լուծում, որոնց համար առաջարկում եմ ատենախոսության հեղինակին շնորհել հոգեբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան:

Ընդդիմախոս՝ հոգեբանական գիտությունների դոկտոր,
պրոֆեսոր Վլադիմիր Կարապետյան

Վլադիմիր Սնանի Կարապետյանի ստորագրությունը հաստատում եմ՝ Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ-ի գիտանխն քարտուղար՝ Հակոբ Թադևոսյան

26.06.2026 թ.